

## ԷՄԱՆՈՒԵԼ ԿԱՆՏ

Հալլէի համալսարանի պրօֆ. Ալուաս Ռիհի ճառ, կարդացուած նոյն համալսարանի հանդիսին, 12 փետր. 1904 թ. Կանան մասնաւան հարիւրամեկին.

1804, Փետրուարի 12-ին Պրուախյի Ահօնիդսբերգ հայրենի քաղաքում վախճանուեց ութսունամեայ Էմանուէլ Կանտը։ Նոյն օրը առաւոտեան վաղ Կանտը մի անդամ էլ ուղղուեց անկողնում, ապա մնաց անշարժ, հանդիստ սպասելով վախճանին։ Առաւոտեան ժամը 10-ին գոցեց նա իւր աչքերը—աչնը, որ մի ժամանակ լուսաւորում էին որպէս կապոյտ եթերական կրակի, բիւրեղեայ պարզութեամբ ու կախարդիչ հայեացքով։ Մի ժամ ևս—և դադարեց սիրտը։ Նրա մահը կետնքի մի մարումն էր և ոչ բնութեան բռնաւոր գործ։

Տարիներից ի վեր նրա հոգին բթացել էր արդէն, նրա հրաշալի յիշողութիւնը նուազել։ Նա արթնանում էր միայն այն ժամանակ, երբ խօսքը գիտնական առարկաների մասին էր շրջւում և նրա յիշողութեան մէջ նկատելի արժանաւորութեամբ ամենից երկար տևուն էին մնացել Փիդիքական աշխարհագրութեան, բնական պատմութեան ու քիմիայի առարկաները։ Նա ծրագրում էր գեռ կարենը երկեր և միշտ նորից պատշաճեցնելով ջանք էր թափում ի կատար ածել, սակայն միշտ ունայն։ Մի բանում միայն նա իրան հարազատ էր մնացել։ Երբ իւր մահից մի քանի օր առաջ նա ընդունում էր բժշկին, մեծ ջանքով ուղղուեց և մնաց իւր թուլութեամբ այս համարեա անտանելի դրութեան մէջ, տալով անհասկանալի նշաններ ու արտայայտութիւններ՝ որ բժիշկը նախ նստէ. Երբ նրա միտքը վերջապէս հասկացուեց, նա իւր բոլոր ուժերը հաւաքելով ասաց՝ «հումանիտեաի զգացմունքը դեռ ինձ չէ թողել»։ Սա նրա վերջին խօսքերից մէկն էր. ուրիշ ոչինչ կարող էր նրա էութիւնը աւելի լաւ որոշել.

Նրա մահուան լուրը հազիւ էր տարածուել և ահա դէպ հանգոցեալը բազմութիւն է խտանում. իւրաքանչիւր ոք կամենում է անձամբ Կանտին տեսնել ապագայում պատմելու համար։ Աճիւնին այցելութեան դալը շատ օրեր տեսեց. Փեռուարի 28-ին հազիւ տեղի ունեցաւ թաղումը համալսարանի եկեղեցու գերեզմանատանը մի այնպիսի պատուվ, որպիսին Կեօնիգսբերգի բնակիչները երբէք չէին տեսած։

Սակայն այսօրուայ հանդէսը մենք նուիրում ենք ոչ թէ մեռածին, այլ անմահին, իւր երկերի մէջ դեռ շարունակ ապրող մարդկութեան իմաստաէրին ու ուսուցչին։

Միայն հարիւր տարուց յետոյ կը հասկացուի նրա գրուածքները ճշմարտութեամբ և ապա թէ նրա գրեերը նորից կուսումն ասիրուին ու կը գնահատուեն։ Կանտի 1797 թուականի այս գուշակութիւնը պէտք էր աւելի շուտ կատարուէր, քան ժամանակը կանցնէր։ Առաջինը վաթսունական թուականներին է սկսում քննուել, ապա աւելի ու աւելի ընդհանրանալով, սկսում է Կանտի մի նոր ուսումնասիրութիւն։ Խնդիրն այն չէր, որ սրանով լրացնուէր այն դատարկութիւնը միայն, որ անցեալ դարու առաջին կիսից թողել էր փիլիսոփայութեան մէջ սպէկուլատիւ սիստեմներից վերջինի, Հեգելի սիստեմի ընդհատումը։ Խնդիրը պատմական-քննական աշխատանքի մասին չէր միայն։ Կանտի ուսումները փորձում էին կապակցութեան մէջ գնել պողիստիւ (գրական) գիտութեան այդ ժամանակամիջոցում արած առաջադիմութիւնների հետ—և հենց առաջինը ընագիտական շրջաններում կրկին ծագեց փիլիսոփայական իրաւացի խնդիրների միտք, հիմնական գաղափարների և ճանաչողութեան ընթացքի հետագօտումն։ Առաջինը Հելմուցն էր, որ զեռ 1855 թ.-արտայայտեց, թէ Կանտի իդէաները դեռ ապրում են և միշտ աւելի հարուստ ծաւալ ստանում։ Բնագիտութիւնը՝ իւր փիլիսոփայական հարցերի համար անհրաժեշտաբար պէտք է գիմէր Կանտին, իբր վերջին փիլիսոփայի, որ միւնոյն ժամանակ և ընագէտ էր։ Եւ այսպէս դարձը դէպի Կանտ պէտք է մեծարել իսկապէս իբրև մի առաջադիմութիւն. գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը փոխադարձ օգտակարութեամբ կապակցող թելերը, որ մի առ ժամանակ ընափիլիսոփայութիւնից կտրուած էին, նորից կապուեցին։ Մի կողմէց էլ կրկին դէպի Կանտ առաջնորդեց ժամանակի մտաւոր կեանքի մի յորձանք։ Անցեալ դարու վերջին երրորդին մեր բարոյական հիմնահա-

յեացքների մի արմատական քննադատութիւն առաջ եկաւ և եթէ նոյն իսկ լինէր դա մի փոթորիկ, որ մտաւոր կեանքի նորոգման յառաջընթաց է եղել, այնուամենայնիւ դա. ինչպէս և ինքը նորոգումը, բարոյական գիտակցման խորագոյն հետազոտութիւն է պահանջում: Գործնական բանականութեան իդէաների մասին մենք դեռ յիշում ենք, մեր ժամանակի մօրալի ու իրաւունքի փիլիսոփայութեան մէջ ևս Կանտի մաքերը կրկին կենդանանում են:

Ո՞չ թէ լոկ գիտնականութեան մի հետաքրթութիւն կամ դպրոցի մի մօդա, այլ գիտնական զարդացման ընթացքն և կեանքի էական հարցերն են մեզ Կանտին այսպէս մերձեցրել, կարծեն թէ մի դար չէ մեզ նրանից անջատում: Մենք նրա ուսումը արծարծում ենք, փորձում ենք աւելի հասարակացնել, աւելի զարդացնել. փիլիսոփայութեան պատմութեան մէջ Կանտը երկրորդ անգամ շրջան է արել և այդ երկրորդ շրջանը այն է, որի մէջ մենք կանգնած ենք,

Իւր ակադեմիական կրթութիւնը Կանտն սկսել է Ֆրիդրիխ Ռ գահակալութեան տարին: Նրա ամբողջ կրթութիւնը արմատանում է լուսաւորութեան դարսում, —« ֆրիդրիխնեան դարում», որպիսի անուն իւր ժամանակաշրջանին տուել է հենց ինքը Կանտը: Նրա ասպարէզը ընկնում է Ֆրիդրիխի կառավարութեան մէջ և երբ սա վերջանում է (1786), Կանտն ևս էականապէս լրացնում է իւր երկասիրութիւնը: Մեծ թագաւորը և կորովամիտ ու իւր գրուածքների չնորհիւ հոչակաւոր դարձած մագիստրոս Կանտ, —այսպէս է կոչւում Կանտը թագաւորի մի բեսկրիպտի մէջ 1766 թ.—ներքնապէս ևս իրար են պատկանում: Ֆրիդրիխի այս խօսքը՝ «կարեսը չէ որ ես ապրեմ, այլ աւելի որ ես իմ պարտը կատարեմ», կարող էր կանգնել նոյնպէս և գործնական բանականութեան քննադատման մէջ:— Յաջորդ թագաւորը, լուսաւորութեան մի թշնամի, Կանտի մասին ոչ մի հասկացողութիւն չունէր: «Կանտի կորստարեր գըրուածքները երկար չեն ապրիլ», բացատրում է Ֆրիդրիխի Վիլհելմ Ռ 1794 թ. մարտի մի գրուածքում: Մենք արդէն գիտենք թագաւորի դժկամակութեան հետևանքները—նոյն տարուայ Հոկտեմբերի հրամանը, ուր Կանտը մեղադրուում է իրը քրիստոնէութեան մի քանի գլխաւոր ու հիմնական ուսումների յարգանքը նուազեցնող, այս սպառնալիքով՝ «դիմադրու-

թեան դէպքում անհաճելի կարգադրութիւններ», — Կանտի վերաբերմունքը հրամանին, նրա խոր ցնցումը, որին ենթարկուեց նրա ներքին զգացումը, ներքին դժուար կոփւը, որ նա կրեց մինչև մի եւք գտաւ Առանց իւր համոզմունքը ուրանալու կամ յետ առնելու նա պարտաւորուեց պապանձման, քանի թագաւորը կառավարում էր: — Կանտի իսկական ժամանակը է և մնամ է նրիդրի մեծի կառավարութեան ժամանակը:

Կանտի կրթութիւնը ևս, ինչպէս նրա արտաքին կեանքը, կանոնաւոր ու մեթոդական էր: «Ես արդէն նախագծել եմ իմ ընթացքը. ես ստր կը դնեմ իւշ շաւղին և ոչինչ չը պէտք է ինձ յետ կասեցնէ», զրում է 22 ամեայ երիտասարդը իւր անդրանիկ զրուածքում («Մաքեր կենսական ոյժերի իսկական արժանիքի մասին»), որ նա շարադրել էր գեռ ուսանողական ժամանակ: Նրա ամբողջ յետագայ ծաղկումն այս խօսքերի հաստատումն ու իրականացումն է: Նրա հետաքըլք քրութիւնը սկզբից հաւասարապէս բաժանւում է բնագիտութեան ու փիլիսոփայութեան: Փորձաւութիւնն ու բանականութիւնը այն աղքիւրներն են, որոնցից օգտուել է նա, մի քննող ու ինքնախորհող անձնաւորութիւն. և յիրաւի նա միայն մի ուսուցիչ է ունեցել: Կանտի այդ աւագին ու միակ ուսուցչի առնունը, Մարտին Կնուտցեն, որ նրան հակել է դէպ նիւտոն և առաջնորդել դէպի փիլիսոփայութիւն, չը պիտի մոռացուի:

Համալսարանական կրթութիւնը լրացնելուց յետոյ Կանտը մի քանի տարի տնային ուսուցիչ էր, վերջը կոմս Կայզերինգդե ընտանիքում, որ սակայն տարուայ մեծ մասը Կեօնիգսբերգ գումն էր անցնում: Իւր հայրենի քաղաքը Կանտը միայն մի կարծ ժամանակով է թողել, իսկ հայրենի քաղաքի պրովինցը նա երբէք չի թողել: Նրա նուրբ շփման տոնը, որ իւրացրել էր կոմսի ընտանիքում, կատարելապէս համաձայնւում էր նրա ընութիւնից կայտառ ու գիտակցօրիէն կրթուած հումանիտեսի զգացմունքին: Քանի որ հումանիտետ ասելով նա հասկանում էր ոչ միայն լոկ քննդանուր կարեկցութեան զգացմունքը, այլ և հներքնապէս ու ընդհանրապէս մասնակցելու կարողութիւն: Նրա կրթուած շփման ձևերի, նրա հանճարեղ, սրամտութեան ու լաւ տրամադրութեան չնորհիւ աշխաժ զուարճախօսութեան չնորհի մասին, մի հրապօւրիչ նկարագրութիւն է թողել մեզ կոմսի դուստրը, Elise von der Recke: «Նա գիտէր վերացական իդէաներն անգամ սիրուն հավուստում պաճուճել. նա

պարզ էր արտայայտում իւրաքանչիւր կարծիք, որը և հաստատում էր և նրա խօսակցութիւնը երբեմն համեմած էր թեթև սատիրայով, որ նա գործադրում էր միշտ պարզ կերպով։ Ով որ Կանտին ճանաչում է նրա գրուածքներից միայն, առանձնապէս նրա վերջին գրուածքներից, նա չէ ճանաշում կանտին։ Կանա փիլիսոփայ է դարձել և միևնոյն ժամանակ մի աշխարհային մարդ մնացել։ Փիլիսոփաների մասին ասած նրա խօսքը՝—ինչ նա գիտէ, չի պատշաճում, ինչ պատշաճում է նա չը զիտէ, —ամենից քիչ իրան է յարմար դալիս։ Նա փնտուող հաստրակական մարդկանցից մէկն էր։ Նրա պէս մի հաճելի գրուցող չի կարելի երևակայել։ բոլոր նրա հետյարաբերութիւն ունեցողները նրա ընկերական տաղանդը բարձր են գնահատել։ Նրա կենցաղավարութեան ստոյգ յատկութիւնները դաֆան տարիների ընթացքում են առաջանում։ Նա միշտ աւելի ու աւելի անձուկ էր հիւսուում մաքսիմումների ցանցի մէջ, մինչև որ դառնում է սահմանաւորուած ու կանոնաւորուած մարդ։ Սակայն և պէտք է աւելացնել, որ իւր մաքսիմումի անյողողող յարատեութեան համար, նա չնորհապարտ է իւր առողջութեան ու երկարատու կեանքին։ Բոլոր կանոնների խստութիւնը չէր կարող ճնշել նրա բնական սղորկութիւնը։ ընդունուած դիրքի միջոցով զեռ նկատելի էր նրա բնաւորութեան չկեղծուած նկարադիրն ու պայծառութիւնը և նրա էութեան յատուկ երախայութիւնը, նման ամեն հանճարաւոր մարդկանց։

Կանտին իւր ծաղկման ժամանակ տեսնելու համար, մեզ կարեոր է 1764 թ. երևակայել։ Նա ծրագրում է մի գրական լրագրի հրատարակութիւն, կարդում է մի գասախօսութիւն մատիմատիկայի ու ֆիզիքական աշխարհագրութեան մասին մի ռուս գեներալի ու իւր սպանների համար, Կեօնիզսբերգի գրաւման եօթնամեայ կուուի ժամանտկ։ Նա շարժւում է հաստրակական աղէտների մի խառնակութեան մէջ և միևնոյն ժամանակ գլխում աշխատանքների մի բազմութիւն ունի՝ մօրալ, մի նոր մետաֆիզիկ, իւր աշխարհագրութիւնից մի քաղուածք և հարիւրաւոր փոքր իղէաններ, —ասում է Համանը։ Եւ այն ժամանակ հրատարակուած «Հետազօտութիւններ գեղեցկի ու գերազանցի գեցացմունքի մասին» գիրքը, թւում է մեզ այն ելանելի ժամանակի մի մատենագրական հայելապատկեր։ Սա տուել է հեղինակին գերմանական La Bruyère անունը։ կնոջ զար-

դասեղանից անգամ այս դիրքը չը պիտի պակասէ, գրում է մի քննադատ:

Նրա դասախօսութիւնները ևս, որ սկսուեցին 1755 ու շարունակուեցին մինչև 1796, իրանց ամենալաւ ժամանակ չունեին ոչինչ ուսումնական: Նրանք նմանում էին մի ազատ խօսակցութեան և թողնում էին զրուցատրութեան տպաւորութիւն, ասում է Հերգերը: Նրա մօտ ոչ թէ ափիլիսոփայութիւն պիտի սովորէին, այլ փիլիսոփայութիւն անել. նա ոչ թէ կամենում էր կրկնողութեան մոքեր տալ, այլ մտածել սովորեցնել Խճռուրոյն մտածել. ինքնին գննել, հարազատ ոտերի վրայ կանգնել այն արտայալումներն ու յորդորներն էին, որ անդադար տեղի էին ունենում: Նա կարդում էր համառօտակի, ինչպէս առհասարակ այն ժամանակ զործածական էր, սակայն ոչ թէ յարուելով բնագրին, այլ էքսկուրսիաներում, որ նա նորագոյն, առանձնապէս Ռուսացի զրուածքների վկայութիւններով աւելի կենդանի դարձնել դիտէր: Սակայն միշտ դառնում է դէպ քրոնութեան անաշառ ծանօթութիւնների ու մարդու բարոյական արձէքը: Բարոյական ու զգայնական աշխարհանութիւն ու ազատութիւն— այս բնեօի շուրջն են պատտուել նրա մտքերը միշտ:

Կրիտիքական փիլիսոփայութեան ստեղծման նախընթաց շրջանում բնագիտական բովանդակութեամբ աշխատանքները ժամանակով ու թուով առաջինն են: Դրանք բովանդակում են բախտաւոր մտքերի ու ենթադրութիւնների մի շարք, որոնք շատ ուշ, մասամբ մեր ժամանակ ստուգուեցին: Կանուր զիտէր, որ երկրի առանցքի պատոյաը մակրնթացութեան հակագիր շարժման շնորհիւ մի աստիճանական դանդաղումն աէտք է կրէ և հաշուել էր այդ յապաղման գումարը: Կանտի շնորհիւ պարզուած երկրի շրջման կերպարանափոխման այս պատճառը գըտել է աստղարաշխական գիտութիւնը հարիւր տարի ուշ: Կանտն է նոյնպէս առաջինը արտայայտել քամիների շարժման օրէնքը համարեա նոյն խօսքերով, ինչ որ 1835 թուին մեկնաբանել է Դօվլի: Նոր հայեացքների ու զարմացնող ենթադրութիւնների մի առատութիւն սակայն բերում է նրա այդ շրջանի գլխաւոր երկը, ընդհանուր բնապատմութիւն ու երկնքի թէօրիան, 31 ամեայ տղամարդու հեղինակութիւնը: Սա ֆիլիքական աշխարհածագման երկուորդ փորձն է, ձեռնարկուած ըստ Դեկարտի, իսկ առաջինը՝ ըստ Նիւտոնիւան հիմնաօրէնք-

Ների: Գրուածքի նիւթը կազմում է աշխարհակառուցման կազմն ու մեքենայական ծագումն, երկուսն էլ համաձայն կապա-կցուած: «Ճուէք ինձ նիւթ և ես դրանից մի աշխարհ կա-ռուցանեմ»: Կանտի աստղային սփառեմի բաժանման մասին կազ-մած նկարագրութիւնը վայլուն հաստատութիւն է դասել շնոր-հիւ Հերշէլի զննողութիւններին ու երկնքի նոր նկարչական հետազօտման: Յարդագովի մէջ Կանտը տեսել է արեղակների մի գունդ, միզամածի մէջ հեռաւոր յարդագողներ: Սյապէս նրա միտքը առաջ թափանցել է տիեզերքի մէջ, անթիւ ու անսահման սփառեմները այնաեղ քննելու, նախ քան գտել է զգայական աշխարհի պայմանը մեր արտաքին տեսողութեան օրէնքի շնորհիւ: Նրա ենթադրութիւնը, որ Սատուրնի միւս կողմը այլ նոր պլանեաններ ևս կան, ճշտել է դեռ իւր կեն-դանութեան ժամանակ Հերշէլի Ռւբանոսի զիւտի շնորհիւ: Ա-րեղակնային սփառեմի ժագման մասին նրա նշանաւոր մառա-խուղային ենթադրութիւնը նորոգուել է միւսնոյն սկզբունքնե-րից, թէև կերպարանաւորուած ձեռվ, քառասուն տարի յետոյ, Լապլասի շնորհիւ: Բայց և այնպէս Կանտի հեղինակութիւնը աւելի ժողովրդական է, այդ խօսքի ամենալաւ իմաստովի: Հը-զօր երեակայութեամբ, որպիսին և իսկական հետազօտողին յատուել պիտի լինի, Կանտը ցոյց է տալիս մեզ մի կիզիչ արե-գակի վիթխարի պատկեր. նա երեակայութեամբ գերազանցում է Հալլէրին:

Տասնութերորդ դարու վաթսունական թուականի սկզբա-ներին իրար ետեից արագութեամբ լոյս են տեսնում Ռուսսոյի գլխաւոր երկերը՝ Հելուազ Նովիլյան, Էմիլիա, հասարակական դաշն: Ո՞չ մի գրող իւր ժամանակի վրայ այդպէս անակնկատ ու խոր չի ներգործել. նա տուել է այն, ինչ ժամանակին պա-կասում էր՝ — կիրք: Կարծւում էր մի նոր ձայն լսել, սթափե-ցուցիչ աշխարհի մէջ բնութեան ձայնը: Մարդկանց հաւասա-րութիւնը, մարդու բնական բարութիւնը, պատմութեան մեր-ժումը, որը բնութեան մարդուց «մարդուն մարդ» է շնել, թէև դեռ միայն լուսաւորութեան իդէաններ էին, որից Ռուսսոն ևս ազատուել չը գիտէր, սակայն հենց այդ ձեւում մի նոր միտք կար, մի նոր հոսանք, մի հոսանք խելքից դէպի սիրտ, գաղափարից դէպի զգացմունք, քաղաքակրթութիւնից դէպի բնութիւն, և այս նոր հոսանքն ու ողին այնպէս հոր էր, որ մրրկով ու ամպոպով փշեց վաղեմի սովորութեան շղթաները:

Կանար ևս Ռուսասով ոգերուում է: Որ նա էմիլիայի ընթերցուածով մոռանում է իւր սովորական զբօսանքը, սա աւել է ասում, քան երբ Փարիզի մի անուանի տիկին Հելուազի ընթերցուածով մոռանում է պալատական պարահանդէսը: Ֆիզիքական աշխարհում նրա ուղեկիցն էր Նիւտոն, բարոյական աշխարհում նրա ուղեկիցն է գառնում Ռուսան: Նա գտնում է անդամ մի կէտ, ուր այդ երկու անհամազգի մտաւոր մեծութիւնները մերձնում են իրար: Խնչպէս Նիւտոնն այնտեղ, ուր անկարգութիւն ու խառնչփոթ այլաձեռութիւն էին տիրում, ամենից առաջ կարգաւորութիւն ու կանոնաւորութիւն էր տեսնում, այսպէս էլ Ռուսասոն ամենից առաջ մարդկային ընդունուած դիրքի զանազանակիրպութեան մէջ զտնում էր մարդու խոր թագնուած ընութիւնը և ծածկուած օրէնքը, որի զործադրութեամբ նախախնամութիւնը արդարացնւում է: Ճանաչողութեան մի նոր զնահատումն Կանար Ռուսասոյից է սովորել: «Ես ինքս հակումով զննող եմ և ճանաչողութեան կատարեալ ծարաւ եմ զգում», բացարում է նա: «Կար ժամանակ, որ կործում էի թէ այս ամենը կարող է մարդկութեան պատիւր լրացնել և ես արհամարհում էի ամրոխը, որ ոչինչ զիտէ: Ռուսասոն ինձ ուղղեց: Զքանում է այս շացուցիչ առաւելութիւնը և ես սովորում եմ մարդկանց պատուելու: Նա իրան աւելի անպիտան կը համարէր, քան սովորական բանուորները, եթէ չը հաւատար, որ իւր զրադմունքը միւսներին արժանիք կը բրեին, վերականգնելու «մարդկային իրաւունքները»: Նրա հետեւալ էլնտուզիազմի հասնողա որոշ մասնակցութիւնը դարու մեծ դէպքին, Փրանսիական յեղափոխութեան, նոյնպէս Ռուսասոյի քաղաքական իդէաների շնորհիւ է բղխուել: Ռուսասոյի նկարը նրա բնակարանի միակ զարդն էր:

Նրա վերաբերունքը զուտ փիլիսոփայութեան կամ մետափիզիկային այս առաջի շրջանում իւրատեսակ է: Նա երերում է վստահութեան ու երկմտութեան միջև: Նա մետափիզիկայի վրայ սիրահարուելու բախտ է ունեցել, թէև, աւելացնում է նա կատակով, ինքը շատ սակաւ է խնդում մետափիզիկայի վաստակած բարեհաճութիւնները դիմաց: Մետափիզիքական ճանաչողութիւնները նրան թւում են մետէօրներ, ուրոնց փայլը իրանց յարատեռութեան համար ոչինչ են խօստանալու: Նրանք անյայտանում են, իսկ մատեմատիկան մնում է: «Նրա փոքրիկ, սրա վերաբերեալ աշխատանքները սկիզբ

առել ըստ մեծի մասին արտաքին դրդումներից, Նա չի կամենում զուտ բանականութեան փիլիսոփայութեան ոչ մի հողի վրայ հաստատուել, դրա մասին մեծ գրքեր դրել, որպէս զի գիտականի հպարտութեամբ ստիպուած չը լինի դրանց ջատագովելու. Դրա փոխարէն նա ազատ է պահում իւր միտքը իւրաքանչիւր նոր կրթութեան համար. Նա իւր մոտաշրջանի մէջ է ընդունում փորձառութեան փիլիսոփայութիւնը. Խմբի սովորացութիւնը նոյնպէս բաղկացուցիչ տարր է մնացել նրա վերջին ուսման: Կ երջապէս զրում է նա մետաֆիզիկային հրաժեշտի նամակ, մի պանչևի սատիրա, «մի ոգետեսի երազներ, մեկնաբանած մետաֆիզիկայի երազների շնորհիւ:» Ոգետեսը Սվեդենբօրդն է, մի նոր Ապօլօնիոս, մետաֆիզիկայի երազների մէջ գտնւում է նոյնպէս և իւր սեպհական մի քանի երազները, որոնց նա Սոլքատէսի իրօնիայով է հեղնում: Ինչի՞ համար են ոգիների աշխարհի այդ աւելարդ հետազօտութիւնները: Միւս աշխարհի գաղանիքների մասին սեղեկութիւն տենչողներին կարող է ծառայել այն բնական վճիռը, թէ ամենից լուհեմ է, որ նրանք կարողանան համբերող լինել, մինչև այնտեղ երթան: «Լուս իւր որոշման շարժուելու համար միթէ մարդ պէտք է մեքենաներ զնէ զէպ մի այլ աշխարհ:» — Փորձառութեան շնորհիւ հասունացած բանականութիւնը, որ իմաստութիւն է դառնում, Սոլքատէսի բերնով ասում է՝ «ինչ շատ իրեր կան դեռ սակայն, որ ես դործ չեմ ածում: Մետաֆիզիկան իրերի գաղտնի առանձնայատկութիւնների մէջ թափանցելու նպատակը չնանի, նա մարդկային բանականութեան սահմանների գիտութիւն է:» — Սա դեռ ճանաչողութեան քննադատումն չէ, բայց մենք կանգնած ենք նրա չէմքին:

Այդ շեմքով ներս է տանում մեղ առաջինը մի զիւտ, որի մուտքն ու տարին մենք կարող ենք հեշտ ծանուցանել, մի գիւտ, թէ տարածութիւնն ու ժամանակը հայեցողութեան ձեւերն են և այն էլ ոչ թէ հենց իրան՝ իրերի, այլ իրերի երևոյթների ձևեր, զգայական գիտակցման համար: Սրա շնորհիւ զգայական աշխարհի ըմբռնողութիւնը յեղաշրջուեց որպէս մի հարուածով: Միայն դեռ կարևոր էին երևոյթի ու փորձառութեան զանազանումն և այն զարգափարների գիւտը, որոնց շնորհիւ երևական կայում ենք մենք երևոյթների օրյեկտները, — և նոր փիլիսոփայութեան. հիմնախարիսխները տրուած էին: Մետաֆիզիկայի

հետ ունեցած իւր յարաքերութեան համար նոր փիլիսոփայութիւնը Կանտն անուանեց ջննական փիլիսոփայութիւն:

Այս նոր իդէաները ծագել են ոչ թէ զբասեղանի վրայ, այլ զրօսանքներում, այսպէս է տեղեկացնում ինքը Կանտը: Մենք ստանում ենք դեռ այս առաջի նսխագծերը. սրանք աւելի պարզ են, քան իրանց վերջնական սրոշումը և խորհողի գիտաւորութիւնները աւելի որոշ են արտայայտում: Նրկը աւարտւում է երկարամեայ աշխատանքով, թէև նրա վերջնական խմբագրութիւնը կատարուեց «ըրպէս մի թոփչը»: Կանտն աւելի կամենում էր տարիներ անցնել, քան շատուցիչ երկեր գրեւ իւր սիստեմը դրանով կարկատելու. նա կամենում էր մի լիակատար հայեացքի հասնել, որը կարող լինէր նրան կատարելապէս քաւականացնելու,—և դրան էլ նա հասաւ:

Դեռ աշխատանքի ժամանակ Կանտը Հալլէ երթալու մի հրաւէր է ստանում, ուս նրա կեանքի արտաքին քիչ պատահարներից մէկն է: Նրկու անդամ փեարուարին ու մարտին 1778 թ., մինիստր Ֆոն Ցեղլիցը հարցնում է նրան, երկրորդ տնդամ ստիլողական եղանակով: Կանտին Հալլէ տեղափոխելու ցանկութիւնը Ֆոն Ցեղլիցը չի կամենում ձեռքից տալ և խոստանում է ամենանպաստաւոր պայմաններ: Նա անուանում է Հալլէն ուսումնական Գերմանիայի կենտրոն: Աստուածաբանական Փակուտէտը այնտեղ լաւ է կազմուած, քան այլ տեղ Սւըրոպայում: Կանտի պարագն է ինչքան կարելի է օգտաւէտ ցնել և 1000 մինչև 1200 ուսանողները իրաւունք ունեն նրանից հրահանգ սպասելու: Մինիստրը դնահատում է նոյնպէս և Հալլէի լաւ կլիման, քան Արևելեան ծովի ափը:

Կրկին մերժում է Կանտը: Վաստակն ու մեծ տեսաբանը իւր համար ոչ մի մղումն յննին, գրում է նա Հերցին, իւր մի աշակերտին: Մի խաղաղ նստակեցութիւն, փոխարինուած աշխատանքով, սպեկուլացիայով ու շփմամբ, է այն ամենը, ինչ նա ցանկացել է ու ձեռք բերել նա իւր աշխատանքի ժամանակամիջոցում խուսափում է իւրաքանչիւր փոփոխութիւնից:

Քսան տարի ուշ, Կանտը մի անդամ ևս Հալլէի համալսարանի հետ յարաքերութիւն է ունեցել, վերջինի միջնորդութեամբ իւր ճանակուտէտի վէճ՝ զրուածքի մի կտորի համար ցենզուր ձեռք բերելու, որ նա Բերլինում ստանալ չը կարողացաւ: Այժմ հաւանօրէն նա ստացաւ:

Գերմանական մտքի պատմութեան մէջ 1781 թ. նշանալից է: Յունուարին առաջին անգամ բեմի վրայ դրսւեց Շիլլերի աւազակները, փետրուարին մեռաւ Լիսուխնզը, մարտին զուտ բանականութեան ըննադատութիւնը Կանտոն ընծայագրեց մինիստր Ֆոն Ցեղիցին, իսկ ինքը զերքը լոյս տեսաւ յուլիսին:

Սա փիլիսոփայութեան ու գիտութեան արձանագրելի գրքերից մէկն է, հաւասար Արիստուէլի լօգիկային ու Նիւտոնի սկզբունքներին: Դրբի ձեր հնացած ու սխոլասակական ժանիայում է երևում: Կանտը ինքը խոսսովանած պիտի լինի, որ զիրքը չոր, մութ ու ցերուցան է և կատարեալ տարրեր բովանդակած հանճարի տոնից, Թերթում են յետ ու առաջ, բացարում է նա, այսպէս չի կարող ոչինչ աւելի պիեղանտական երեալ, չը նայած որ կատարելապէս խոսսափուած է այն հարցերի բոլոր պեղանտականութիւնից, որոնք հողու բնութեան, ապագային ու բոլոր իրերի ծագման են վերաբերում: Միայն մնատաֆիզիկայում զգոյշ պիտի լինել, կարծում էնա, Եթէ անգամ նա իւր կարողութեան մէջ ունենար Խմի բոլոր պաճուճանքները, էլի նա կը դժուարանար դրանից օգտուել, ոչ մի կասկած չը թողնելու, թէ կամինում է ընթերցողներ զրաւել ու համոզել: Բարերազստարար նա ինքը իւր երկի հայեացքներն ու եզրակացումները ընդարձակ կերպով մի անգամ էլ հաղորդել է, որ թէ նոյնպէս անյարմար է ընթերցող զրաւելու, սակայն ուսուցանում է նրան ամենապարզ կերպով: Խօսքու պրօեցոմենայի մասին է:

Վըկը ինչ բովանդակում, ինչ ներկայացնում է, կատարեալ մի նոր գիտութիւն է, որի իդէաներն անգամ անծանօթ էին. փորձառութիւնից անկախ իրերի մասին դատող բանականութեան գիտութիւն: Ըստ որում սա նշանակում է զուտ բանականութիւն: Նոր է նոյնպէս և երկի մետոդը, ինչպէս առարկան, այս սահ հանաւորման ու բաժանման մէջ: Կանտից առաջ նոր փիլիսոփայութեան մէջ փորձեր չեն պակասել, զըտնելու մեր մտապատկերների ծագումը, ապա դրանով որոշելու մարդկային ճանաչողութեան սահմանները. անգամ Լօլի ու Խմի մօտ պատահում են ճանաչողութեան քննադատման բողքոջներ: Այս փորձերը սակայն իրանց ղեկավարման անբաւարութեան շնորհեւ կզուր և անցել: Փորձառութիւնն ու բանականութիւնը նրանք զատում են որպէս իրավ մօտ ընկած

երկու շրջաններ, մէկին վերագրում են փաստերի ճանաչողութիւն, իսկ միւսին սահմանաւորում են իրքեւ գաղափարների յարաբերութեանց կշռադատումն։ Որ արդէն փորձառութեան առարկան միայն զաղափարի շնորհիւ է ըմբռնւում, ուրեմն ամեն մի փորձառութեան կարեոր է հասկացողութիւն կամ բանականութիւն, այդ դէպքում պէտք է փորձառութեան առարկան թագնուած մնայ և իրերի ամին ճանաչողութիւն զուտ փորձառութեան վրայ հիմնելու ձգտումը վերջանում է օրյեկտի տիւ ճանաչողութեան հնարաւորութեան ժխտմամբ։ Այս կէտից, մինչև ուր Խւմը հասցըել է փիլիսոփայութիւնը, շարունակում է Կանացը։

Զուտ բանականութեան կրիտիկայի բովանդակութիւնը հազիւ սպառելի է և Կանափի կարծիքը, որ իւր գրուածքները հարիւր տարրուց յետոյ միայն ճշտութեամբ կը հասկացուին, ամենից առաջ այս գըքին է վերաբերում։ Երկի ներքին մասերը ակներև դարձնել հեշտ չէ, իսկ արտաքինով նման է լոգիկայի մի սիստեմի, իրեւ նրա մերձաւոր կտորներ ու մասեր։ Այս շրջանակի ներսը քննուած են առանձին մետաֆիզիկական գիտութիւններ՝ ուսցիօնալ հոգեբանութիւն, տիեզերագիտութիւն, աստուածարանութիւն։ Իսկ «օնտոլոգիայի» փոխարէն ըերուած է փորձառութեան թէօրիա։ Այս երկը իսկապէս երս կու զլսաւոր մասեր ունի՝ մետաֆիզիկայի քննադատութիւն, որից էլ կը ում է անունը և դրանից առաջ դրուած փորձառութեան հիմնադրութիւնը։ Սա կանդում է երկու ճակառակորդների դէմ և հաւասարապէս կուռում է երկու ճակառակորդների դէմ, մէկը մետաֆիզիկայի, միւսը զուտ փորձառութեան դէմ։

Կանափի խնդրաբառութիւնը արդէն որոշիչ նշանակութիւն ունի։ Ո՞չ թէ ինչպէս է հասնում մարդ փորձառութեան ու զիտութեան, իւր մաքի որ պլուցեաների կամ կարողութեան շնորհիւ, այլ թէ ընդհանրապէս ինչպէս է գիտութիւնը հնարաւոր և փորձառութիւնը ինչ է բովանդակում, այս է Կանափի հետազոտութեան առարկան։ Նրա հարցը վերաբերում է ճանաչողութեան զաղափարին և ենթադրութիւններին, որոնց շնորհիւ փորձառութիւնը ճանաչողութիւն է։ Ո՞չ թէ փորձառութեան ծագման մասին է նրա խօսքը, այլ փորձառութեան մէջ բովանդակուածի մասին։ Կանափ չէ զբաղւում անմիջապէս ճանաչողութեան կարողութեամբ, նա զանազանում ու քննում է ճանաչողութեան տեսակները։ Նա չէ ընթանում գիտակցման

հոգերանութեան ու Փիզիօգիայի ճանապարհով, ուստի և նա դուրս չէ գալիս զգայական տպաւորութիւններից ու ըմբռնում. ներից, որոնցից և աներկմտաբար սկիզբ է առնում ամրող ճանաշողութիւնը. Նա իւր ամրող ընթացքը վերցնում է ճշգրիտ կամ ռացիֆնալ գիտութիւններից, մատեմատիկայից, ընդհանուր բնական գիտութիւններից ու փորձառութեան գաղափարից, և այն ձեր, որով նա գիտութիւնն ու փորձառութիւնը կապակցում է, ցոյց է տալիս նրա մտքի խորութիւնն ու առանձնայատկութիւնը:

Բնութեան մէջ մատեմատիկա կայ, ասում էր Կեպիկը. բնութեան մէջ ինչու մատեմատիկա պէտք է լինի, բացատրում է կանար: Նա ապացուցանում է, որ այն գաղափարները, որոնք մատեմատիկայի ճանաշողութիւնների հիմքն են կազմում, տարածութեան ու ժամանակի գաղափարները, զուտ հայեցողութիւններ են, ուստի և մեր հայեցողութեան ընդհանուր ձեւերը կամ օրէնքներն են արտայայտում, ուրեմն նկատած իրերի ձեւերը: Տարածութիւնն ու ժամանակը այն ամենի հետ, ենչ գաղափարների ժամին ուսուցանում է մատեմատիկան, անհրաժեշտ են մեր զգայական գիտակցման համար իրերի հայեցողութեան կամ նրանց երևոյթների մասին. և բնութիւնը պէտք է մատեմատիկական օրէնքների հետ ճշտութեամբ համաձայնէ. սրանք են բնութեան երևոյթների օրէնքները:

Փորձառութեան մէջ երևոյթները վերաբերում են առարկաներին, որոնք ոչ թէ նորից երևում են, այլ մտածում են իրեւ երևոյթների որոշիչ պատճառներց: Փորձառութեան հնարաւորութեան պայմաններից կանտը հետեցնում է բնութեան ընդհանուր օրէնքները: Նրանք բնութեան օրէնքներ են, որովհետև նրանք բնութեան փորձառութեան օրէնքներն են: Որ փորձառութիւնը կարօտ է այդպիսի հիմնաօրէնքների ու պրինցիպների, որոնք նրա հնարաւորութեան հիմքն են կազմում և որ այդ պրինցիպները համաձայնում են բնագիտութեան եղակացումներին, դա կանտի գիւտն է: Սակայն կանտը դեռ հեռու է գնում, աւելի խորը թափանցում: Նա փորձառութեան օրէնքները, դրա հետ և բնութեան ընդհանուր օրէնքները հասցնում է իրանց վերջին հիմքին, տանում դէպ իրանց սկզբնական եթերը. ընդհանրապէս դէպ մի երեակայելի գիտակցման միութիւն: Օրյեկտի ոչ մի միութիւն չի կարող երևակայուել, առանց մտածող սուբյեկտի բացարձակ միութեան: Մի-

այն մի ընդհանուր գլուխակցման համար, որի մտապատկերները — ես կարծում եմ —ուղեկցուել կազող են, հնարաւոր է ընդհանրապէս ճանաչողութիւնը, ուրեմն և փորձառութիւնը, որ է երեսյթների առարկաների մասին ունեցած ճանաչողութիւնը:

Զուտ բանականութեան քննադատման առաջին և պողիար նախադասութիւնը ձայնում է ուրեմն՝ փորձառութիւնը ճանաչողութիւն է, քանի որ նա հնարաւոր է միայն շնորհիւ մտածման հիմնաօրէնքների, կապակցուած հայեցողութեան ուրէնքների հետ: Բայց որ հակառակ նախադասութիւնը ևս արև ժեք ունի և ճանաչողութիւնը միայն փորձառութեան մէջ է, այդ ապացուցանում է Կանաց երկի երկրորդ բաժնում: Մետաֆիզիկայի իր գերզդայական իրերի թէօրետիքական ճանաչողութեան այս մասում, նա պրոցես է կատարում և պրոցեսի ակտերը նա դնում է մարդկային բանականութեան արխիւմ մէջ — ի պահանջնութիւն ապադայ նման տեսակի լրիպանքների: Հասարակ հասկացողութեան կամ բանականութեան գաղափարները, վերաբերուէին ընդհանրապէս իրերին թէ միայն փորձնական հայեցողութեան մէջ արուած իրերին, նրանք իսկոյն կը դպչէին դատարկութեան և կառաջացնէին մի դիալէկտիքական խաղ: Թէօրետիքական բանականութեան «դիէանէրը» սակայն աննպատակ չեն մեր մտածողութեան տնտեսութեան մէջ: Միայն նրանք ոչ թէ իրերն են ներկայացնում, այլ ճանաչողութեան խնդիրներն ու նպատակները, քանի որ ճանաչողութիւնը լրանալուց յետոյ սիստեմատիքական վախճան է տենչում: Ուրեմն նրանք մետոդական գաղափարներ են և միայն զննողութեան ամենավերին ուղղման կէտերի նշանակութեամբ:

Այսպէս իրերի թէօրետիքական ճանաչողութիւնը Կանտը սահմանափակում է փորձառութեամբ, — ամենապարզ ապացոյց ներով նա անպատշաճ է գտնում յուսալ որևէ առարկայի մասն աւելի ծանօթութեան, քան նոյն առարկայի հնարաւոր փորձառութեան պատկանում է — բայց փորձառութիւնը նրա փիլիսոփայութեան մէջ, մի կատարեալ այլ, մի շատ խորագոյն նշանակութիւն է ստանում, քան փորձառութեան փիլիսոփայութեան մէջ: Սա հայեցողութեան մէջ մտածողութեան արդիւնքն է, ուստի և հնարաւոր միայն մի մտածող, ինքնազիտակից զգայական էակի համար, բայց և այսպիսի էակի հա-

մար նոյնպէս և անհրաժեշտ: Եւ պողիախիդմի հիմնաօրէնքի հետ, բանականութեան գործածութիւնը հնարաւոր փորձառութեան անդաստանից դուրս չը մղելու համար, Կանտը կապում է այս մի ուրիշը՝ «Հնարաւոր փորձման անդաստանը չընդունել այն, ինչ բանականութեան հայեցողութեան մէջ ինքն իրան սահմանափակում է»:

Կանտի քննական փիլիսոփայութիւնը, ինչպէս զուր բանականութեան գործատիզմի, նոյնպէս և փորձառութեան յաղթութիւնն է:

«Բննադատօրէն փիլիսոփաւուած ու մետոդով առաջնորդուած գիտութիւնը է այն անձուկ դուռը, որ տանում է դէս զգօն իմաստասիրութիւն, որի աւանդապահը ամեն ժամանակ փիլիսոփայութիւնը պէտք է մնայ»:

Փիլիսոփայութեան երրկը չի բաւականացրել զիտութեան ուսումը կամ բանականութեան ճանաչողութիւնների մի սիստեմ մը: Փիլիսոփան միևնոյն ժամանակ է «մի իրէալական ուսուցիչ»: Փիլիսոփայի այս պատկերը ինքը հենց նոյն իսկ մի իդեալ է, մի կազապար. սակայն ուսման ու կեանքի մէջ շատ քչերն են առելի մերձեցել այս պատկերին, քան Կանտը: Ուստի մենք նրան հաշւում ենք վարքատէր փիլիսոփաների շարքում և նրա մօրալ փիլիսոփայութիւնը երևում է մեզ իրըն բարոյական վարքի օրինագիրք:

Երբ լսում է Կանտի մօրալ փիլիսոփայութեան մասին, իսկոյն ի հարկէ կը մտածուի Շկատեգորիական (բացորոշ) հրամայականից մասին և որտինետե այս խօսքը ժողովրդական նըշանակութեան մէջ ունի ամբարտաւան ու հրամանատարական տօն, ուստի խօսւում է Կանտի էտիկայի մարդկային բնութեան բոլոր հոգեբանական պայմաններին հակառակող մի խստութեան մասին. կատէդօրինական իսկապէս չէ նշանակում միայն հիպօթերական, այսինքն պայմանաւորած, այլ անպայման, բացուցող հրամայականը միայն մի ձև է, որ մեր վարտաւորութիւնները՝ որոշ դէպքերում ճանաչելու պիտի ծառայէ. նա միևնոյն ժամանակ մօրալ վարքի պրինցիպը չէ: Այս ձեին վերաբերուղ բոլոր առարկութիւնները, որոնցից մի քանիսի հետ ես համաձայնուելու եմ հակուած, չեն շարժում Կանտի էտիկայի իսկական պրինցիպը: «Բոլոր մօրալ օրէնքների այս միակ պըլինցիպը» է կամքի ինքնօրինութիւնը, կամքի ու բանականութեան միու-

թիւնը։ Խնքնօրինութիւն նեղատիւ նշանակում է ցանկութեան անկախութիւն բոլոր մատերիայից, բաղաձած առարկայից, ցանկութեան անկախութիւն բոլոր լոկ զգայական շարժառիթներից։ Խնքնօրինութիւն պողիտիւ է սեպհական օրէնսդրութիւն, ինքնաօրինադրութիւն, որ է ազատութիւն։ Ազատութիւնը բարոյական օրէնքի պրինցիպն է, իսկ ազատութեան իդէան է բարոյական իդէա։ Բարոյական օրէնքն է միայն ի լոյս հանում ազատութիւն։ ազատութիւնը հնարաւոր է երբ բարոյական օրէնք միայն։ թէօրեաիքական բանականութեան հայեցակէտերից նա երևակայելի է, իսկ գործնական բանականութեան չնորհիւ նա կը լինի իրականացած։ Ազատութիւնը չէ գոյանում վարմունքների պատահականութեան մէջ, որ ըստ այդմ չը որոշուէին սրանք ոչ մի՛ հիմունքների չնորհիւ։ վարմունքը ազատ է, քանի որ նա բանականութեամբ է որոշուած, ազատ—ամեն իսկական կամքի վարմունք։ Մի բանական էութեան արժանաւորութիւն է, երբ նա չի հալատակւում ոչ մի այլ օրէնքի, բացի նրանից, ինչ որ հենց ինքն է տալիս։ Բարոյականութեան իշխանութեան մէջ մարդը իրական է, որպիսին Ռուսոսի կառավարութեան մէջ միայն առերևոյթ կը լինէր, հպատակ ու պետ մի անձնաւորութեան մէջ։

Հակումները փոխում են և թողնում են միշտ դատարկութիւն, զգացումները նախ հանդարտուում են, պարտաւոր են իրանց ներգործումները անել և առաջացնում են միայն անհեթեթութիւն, մնում են միայն սկզբունքները։ Բարոյական օրէնքը, որից սկզբունքները բղխում են, ազատութեան օրէնքը բոլոր բանական բնաւորութիւնների համաշխարհային օրէնքըն է և ինչպէս ինքը բանականութիւնը, ամեն տեղ և ամեն ժամանակ մինոյն է։ Մենք ընդունում, մենք կըում ենք այս ներքնապէս իրեն պարտք։ Այս բարոյական պարտաւորութիւնը սակայն մեր իսկական, սեպհական, խորագոյն ցանկութիւնն է, որ ինչպէս արև մէջի միջով կը ցայտէր, եթէ կարողանայինք հեռացնել մեր հակազդիչ զգայական մղումները։ Պարտք, այսպէս է շեշտում կանտը, պարտք, զնո՞ւ գերազանց, մեծագոյն անոն, որ չես ընդունում ոչինչ հաճելի, ինչ որ չողոքորթութիւնը հետը բերել է, այլ հպատակեցնում ևս քեզ, նոյնպէս էլ չես սաստում կամքը շարժելու, այլ մի օրէնք ես դնում միայն, որը ինքնին սրտում մուտք է գտնում և որի առաջ ամեն հակումներ լուսում են, —որն է քո մեծարժան ծագումը և մւր

կարելի է գտնել քո ազնիւ սեռման արմատը. Ոչինչ կարող է խորագոյն լինել, քան ինչ մարդուն իրանից բարձրացնում է ու կպցնում նրան իրերի մի կանոնաւորութեան, որ ամբողջ զգայական աշխարհը իւր տակն ունի,—ոչ այլ ինչ, քան անծ-նաւորականութիւնը:

Խոկապէս Կանտը ևմի իդէալական ուսուցիչ էս: Նրա էտի-կան ոչ ձեական, ոչ վերացական է, քանի որ նա ձգտում է անձնաւորականութեան կենսալից իդէայի, գերազանց իդէայի: «Գերազանցը, որ նոյնպէս միայն երևակայել կարելի է, սրտի մի կարողութիւն է ապացուցանում, որ գերազանցում է զգաց-մունքների ամեն չափ»: Իրրև զգայական էակ, մարդը բնու-թեան է ենթարկուած, իրրև անձնաւորականութիւն նա բնու-թիւնը հնազանդեցնում է իրան. նա ուղիղ կանգնած է բնու-թեան մէջ և բնութիւնը իւր ուգերի տակ ունի: Մարդու ներքնազոյնը, նրա խորագոյնն ու բարձրագոյնը, անձնաւորա-կանութիւնն է, մարդկութիւնը մարդու մէջ: Նա չի կարող անձնաւորականութիւնը թողնել, առանց դաւարելու մարդ լի-նելուց: Անձնաւորականութիւնը միակ գերզգայականն է, որի մասին մենք զիտենք և որը միւնոյն ժամանակ իրականացնել կարող ենք, պարտաւոր ենք,—նա է այն կենսական կէտը, որից զգայական աշխարհի երևակայութիւնն է ծագում և որի շնորհիւ բարոյականը կաւալփարում է: Կամքը դէպի անձ-նաւորականութիւն՝ է իսկական կամք դէպի իշխանութիւն:

Բնութեան ու ազատութեան միջն մի կապ հաստատելը որոշում է Կանտի երրորդ երկը, դատողութեան քննադա-տութիւնը:

Սյս երկի մէջ Գեօթէն տեսնում է Նրա ամենահակասա-կան զբաղմունքները կողը կողքի դրսւած՝ գեղարուեստ ու բնէարդիւնքներ, մէկը ճառարանուած որպէս միւսը էստետի-քական ու տելեօլոգիստական դատողութիւնը պարզաբանուած փոխադարձարարաց: Նա զգում է իրան կրքուատութեամբ յուղուած ու առաջ է ընթանում իւր ճանապարհին մոլեգին:

Գեղեցկութիւնը նպաստակայարմարութիւն է առանց գա-ղափարի, ազատութիւն է երևոյթի մէջ գեղեցիկ գեղարուեստը մի գեղարուեստ է, որ միւնոյն ժամանակ թւում է իրրև բնու-թիւն: Սրանով ցոյց է արւում այն կէտը, ուր չօշափւում են

Էստետիկան ու տելեօգիան, երկու ըստ երևութին օտար իրեք: Գեօթէն ևս այսպէս է հասկացել գեղարուեստը, երբ նա պահանջում է, որ գեղարուեստական մի աշխատանք պէտք է ձեռնարկուի ու ներկայացնուի իրը բնութեան մի գործ: Բոլոր գեղարուեստական ստեղծագործութեանց իմաստին յարմար է գալիս Կանտի հանճարի մասին ասածը, իբրև ռոգու ընածին տաղանդ, որի միջոցով բնութիւնը գեղարուեստին կանոններ է տալիս: Կանտը էստետիկային ևս ճանապարհ է ցոյց տուել: Ոչ թէ գեղարուեստի կանոնաւորութեան վրայ է այլտեղ ակնարկուած՝ գեղեցիկը չի կարելի ուսուցանել, այլ միևնոյն ժամանակ գեղարուեստական երկի մի սուրյեկտիւ ու օրյեկտիւ հնարագիտութեան վրայ, հաւասար բնութեան մի վաստակի: Եւ մի ժամանակ, երբ գեղարուեստի պատմութիւնը միշտ աւելի կը զարդանայ դէպ գեղարուեստի դիտութիւն, նրա ուղեցոյց մտքերը, ամենից առաջ ազատ գեղեցիկութեան ուսումը, նոր նշանակութիւն պէտք է վաստակին:

Նպատակը, ասում է տելեօգիական դատողութեան հիմնարկները, բնութեան բացատրութեան ոչ մի պրինցիպը չէ, նա բնութեան միջի որոշ ձևերի քննութեան մի պրինցիպն է, առանձնապէս օրդանականի. Այս ձևերի ծագման ու հնարաւորութեան մասին նպատակը ոչ մի մեկնութիւն չի տալիս, այլ ծառայում է միայն նրանց նկարագրելու: Մենք չենք կարող բացատրել բնութեան մի նպատակ, չենք կարող քննել նրան իրեւ դիտաւոր ներգործիչ: Բնութեան բոլոր արդիւնքների լոկ մեքենայական բացատրութեամբ արտայայտելու ձեռնհասութիւնը անսահմանափակ է, իսկ ըստ մեր հասկացողութեան կազմի կարողութիւնը, դրանով բաւականանալու, սահմանափակ է: Ճիշտ վերցրած օրդանիզացիան (կազմակերպութիւնը) մեր իմացած որ և է պատճառականութեան հետ ոչինչ նմանութիւն չունի: Օրդանիզմները իրանք իրանց պատճառ ու ներգործումներ են թւում, նրանք ոչ միայն կազմակերպութիւնը են, այլ իրանք՝ հենց կազմակերպող էութիւններ են, Կանտի ենթագրութիւնը, որ բնութեան մեղ անծանօթ ներքին հիմքում կարող են Փիզիկա-մեխանիկական և նպատակակապ յարակցումներ լինել չարժել է Գեօթէի զարմանքը: Մարդկային ոչ մի հասկացողութիւն աւելի խոր թափանցել չի կարող, կարծել է Գէօթէն, քան մինչեւ այն սահմանը, որին հասուլ է Կանտը դատողութեան քննադատութեան մէջ:

Անցեալի վերածնութեան ոգով տմենաշատ ընդունում են Կանտի կրօնափիլխոփայական գրուածքները: Կրօնի պատմական կեանքի մասին Կանտն անչափ քիչ հասկացողութիւն ունի քան Լեսինզը, որի հետ հիմնահայեացըներում Կանտը յաճախ համաձայնում է և ի հարկէ նրա զուտ մօրալ հաւատը չէ աըկարացնում կրօնական պատմահարների էութիւնը, որովհետեւ ոլորա զգայական կողմը աննկատ է թողնուած: Ով սոեղծում է իրանից մի բարոյական, մի ինքնօրէն անձնաւորականութիւն, — նա կրօն ունի:

Կանտը փիլխոփայութեան մէջ մի յեղափոխութիւն է մացըրել, ինչպէս որ Կոսկերնիկը աստղաբաշխութեան, իսկ Գալիէն Գիզիկայի մէջ մացըրել են և այս հետազօտողների նախապատկերը սոււառնում էր Կանտի աչքերի առջև իւր երկի աշխատանքի ժամանակ: Նա փիլխոփայութեան տուել է իւր ինդիրը և միւնոյն ժամանակ խնդրի լուծման մետողը: Կարելի է ասել, որ ինչ որ խկապէս փիլխոփայութիւնն է և նշանակում է, առաջինը ցոյց է տուել Կանտը: Փիլխոփայութիւնը ոչ թէ պէտք է գիտութիւնը փոխարինէ, այլ լրացնէ, քննելով մեր գիտութեան հիմնախարիսխները ու բացրելով նրա օրյեկտների նշանակութիւնը:

Զուտ գիտութիւնը սակայն, լինի նա նոյնպէս փիլխոփայօրէն ըմբռնուած ու խորամուտ եղած, չի կարող լրացնել մեր մտաւոր գոյութիւնն ու կեանքը: Ուստի և Կանտը, որ մետափիզիկանի տեսական ճանաչողութիւնը ջնջել է, պահում է մետափիզիկայի գործնական որոշումը, իրեւ մեր մտքի մի բնական ձիք:

Բարոյական ու զգայական աշխարհը նրա փիլխոփայութեան մէջ կատակցւում են, որպիսին առաջ չկար երբէք: Մեր ինքնագիտակցման միւնոյն գործնչութեան ձեւը, որ արտաքին աշխարհի ճանաչողութիւնը հնարաւորեցնում է և փորձառութիւնները կապակցում է բնութեան կամ փորձառութեան միութեան, է նոյնպէս բարոյական օրէնքի աղքիւր, կատարեալ միւնոյն բանականութիւնը, նրա միջոցով մենք կարող ենք և պարտաւոր ենք զգացումների աշխարհից մեզ վեր բարձրացնել:

Եթէ Կանտի սիստեմի ձեւերը գործածուել անդամ կարողանային, այնուամենայնիւ կերպարանափոխման ոչ մի օրէնք

չե կարող գործածել այդ սիստեմի հիմքերը, այսպէս է դատել և Շիլէրը, քանի որ որբան հին է մարդկային սեռը և որքան երկար բանականութիւն կայ, նրանք լուսութեամբ ճանաչուել են:

Հպարտանանք մենք, իմանալով, որ այսօրուայ օրը մեզ հետ տօնում են արտասահմանեան ընդարձակ փիլիսոփայական ու գիտանական շրջանները ևս, — հալորտանանք, որ մեր հայրենիքը տուել է աշխարհին նորազոյն ժամանակի ամենամեծ փիլիսոփային. Միևնույն ժամանակ սակայն մեզ վրայ պարտականութիւն և պատասխանատութիւն է դրուած: Մենք պարտաւոր ենք նրա մտքի ժառանգները լինել և նրա կտակը մեզ վրայ ընդունելով, առաջ տանենք ու ընդարձակենք նրա աշխատանքը, ինչ որ նրանից ստացել ենք: Խսկ այս մենք կարող ենք միայն այն ժամանակ, երբ մենք, փոխանակ կանգ առնելու նրա խօսքերի վրայ, հետեւնք նրա շարունակ ազդարած ինքնամտածողութեան մաքսիմումներին: Եւ վերջապէս մենք ևս նոյնպէս պէտք է փորձենք հասնելու աշխարհահայեցողութեան այն բարձրութեան, որ արտայատել է Կանար յաճախ վրկայութեան բերած այս խօսքերով՝

«Երկու իրեր լրացնում են ներքին զգացումը միշտ աւելի նոր ու աճող հիացմունքով ու մեծարանքով, որքան յաճախ ու յարատե է զբաղւում դրանով խօսիրդածութիւնը, — աստղալից երկինքը ինձնից վեր ու բարոյական օրէնքը իմ՝ մէջ: Տիեզերքների անսահման քանակութեան այդ առաջին հայեցքը խսկոյն ոչնչացնում է իմ կարևորութիւնը, իրեւ մի արարածի, որը մատերիան, որից ինքը ստեղծուել է, պէտք է վերադարձնէ կրկին պանէտին, տիեզերքի այդ մի չնշին կէտին: Երկրորդը ընդհակառակը, բարձրացնում է իմ արժանաւորութիւնը, իբրև մի ինտելիգենցի (իմացականութիւն), որը անվերջանակի է շնորհիւ իմ անձնաւորականութեան, որի մէջ բարոյական օրէնքը ամբողջ զգայական աշխարհից անկախ մի կեանք է յայտարարում: — Երկու իրեր, զգայական աշխարհի անսահման աւարութիւնը մեզնից դուրս և մտաւոր էութեան անվերջանալիութիւնը մեր մէջ:

Գերմ. բարգմ. ՅՈՎ. ԲՈԶԻՆԱՆ

Հալլէ.